ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2017 թվականի դեկտեմբերի 18-22-ը Տալլին (Էստոնիայի Հանրապետություն)
գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը**

   Վաչե Տերտերյան

2. **Զբաղեցրած պաշտոնը**

   ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի առաջին տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները**

   Տալլին (Էստոնիայի Հանրապետություն), 2017 թվականի դեկտեմբերի 18-22-ը

4. **Հրավիրող կողմը**

   Տալլինի զարգացման և վերապատրաստման կենտրոն

5. **Գործուղման նպատակը**

   Մասնակցել «Տեղական ինքնակառավարման կառուցվածքը և բարեփոխումները» թեմայով ճանաչողական այցին

6. **Քննարկված թեմաները**

   Համայնքային ծառայությանը, վարչատարածքային բարեփոխումներին, պետական բյուջեից համայնքներին ֆինանսական համահարթեցման դոտացիաների տրամադրմանը, համայնքներում ծրագրային բյուջետավարման ներդրմանը վերաբերող և փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ թեմաներ:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը**

Տեղի են ունեցել հանդիպումներ Էստոնիայի Հանրապետության կառավարության, քաղաքային իշխանությունների ղեկավարների հետ, մասնավորապես Էստոնիայի Հանրապետության պետական կառավարման նախարարի, Տալլինի քաղաքապետի, Հաապսալուի քաղաքապետի, Արևելյան գործընկերության էստոնական կենտրոնի ներկայացուցիչների հետ:

Էստոնիայի Հանրապետության պետական կառավարման նախարար Ջաակ Աաբի հետ հանդիպման ընթացքում ներկայացվել են երկու երկրների վարչատարածքային բարեփոխումների առանձնահատկությունները, բարեփոխումների ճանապարհին առկա մարտահրավերներն ու քաղած դասերը: Պայմանավորվածություն է ձեռք բերվել աշխատանքային կարգով իրականացնել փորձի փոխանակում էլեկտրոնային կառավարման, տեղական ինքնակառավարման, համայնքային ծառայության բնագավառներում:

Տալլինի քաղաքապետ Թաավի Աասի հետ հանդիպման ընթացքում էստոնական կողմը մանրամասնորեն ներկայացրեց Տալլինի զարգացման տեսլականը, տեղական ծրագրերի իրականացման համար ֆինանսական միջոցների ներգրավման գործիքակազմն ու ուղիները, համայնքային ծառայության ոլորտում իրականացված բարեփոխումները, կադրերի վերապատրաստման ու շարժունակության գործընթացը: Իմ կողմից անդրադարձ կատարվեց ՀՀ համայնքների բյուջեներին համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների հաշվարկման և հատկացման կարգին, համայնքային ծառայության ոլորտի բարեփոխումներին, էլեկտրոնային կառավարմանն ու վարչատարածքային բարեփոխումներին: Արևելյան գործընկերության էստոնական կենտրոնի տնօրեն Յաան Ռայնհոլդի և փոխտնօրեն Թիինա Իլսենի հետ նույնպես քննարկվեց Արևելյան գործընկերության համատեքստում երկկողմ հետաքրքրություն ներկայացնող մի շարք հարցեր:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Էստոնիայի Հանրապետություն այցի ընթացքում հանդիպել եմ նաև Հաապսալուի քաղաքապետ Ուրմաս Սուկլեսին, ում հետ երկկողմ հետաքրքրություն

ներկայացնող հարցերի քննարկումներից բացի անդրադարձ կատարվեց նաև ապակենտրոնացված համագործակցության հարցերին: Հանդիպման ընթացքում ՀՀ Դիլիջան համայնքի ղեկավար Արմեն Սանթրոսյանը և Հաապսալուի քաղաքապետը ստորագրեցին մտադրությունների հուշագիր, համաձայն որի՝ երկու քաղաքները պարտավորվել են զարգացնել բարեկամությունն ու խրախուսել Դիլիջանի և Հաապսալուի միջև ակտիվ համագործակցությունը:

9. Գործուղվողը

Վաչե Տերտերյան

10. Ստորագրությունը, ամսաթիվը

23.12.2017թ.